12.08.24 - 23.08.24
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Երևանի պետական համալսարանին առընթեր գործող Օպտիկների միջազգային կազմակերպությունների՝ «Optica»-ի և «SPIE»-ի ուսանողական միացյալ մասնաճյուղը («YSO Student Chapter») **ս.թ. օգոստոսի 12-23-ը Երևանում** կիյուրընկալի Օպտիկայի և ֆոտոնիկայի ժամանակակից կիրառությունների միջազգային 1-ին քոլեջը («MAOP 2024»):

«MAOP 2024»-ը հովանավորվում է «YSO»-ի «Optica»-ի «Հատուկ ծրագիր» դրամաշնորհի շրջանակում: Այն Երևանի պետական համալսարանի օպտիկայի լաբորատորիաներում մեկշաբաթյա գործնական պարապմունքների և դրան հաջորդող մեկշաբաթյա ներկայացումների, պանելային քննարկումների համադրություն է:

Աշխարհի ավելի քան 20 գիտահետազոտական հաստատություններից հրավիրված բանախոսները կներկայացնեն իրենց ելույթները հետազոտական տարբեր թեմաների շուրջ: Քոլեջի շրջանակում հատուկ բաժին է հատկացվելու ակադեմիական և արդյունաբերական տեսանկյունից մասնագիտական զարգացման դասախոսություններին:

Ուսանողները հնարավորություն կունենան իրենց հետազոտությունները ներկայացնելու բանավոր և ստենդային զեկուցումներով:

«MAOP 2024»-ը նպատակ ունի ստեղծելու անվտանգ և ազատ տարածք ամբողջ աշխարհի գիտնականների համար՝ ներկայացնելու օպտիկայի և ֆոտոնիկայի վերջին հետազոտությունների արդյունքները:

ՀՀ քաղաքացիների և բուհերի մասնակիցների համար ծրագրին մասնակցությունն անվճար է, իսկ այլ մասնակիցների համար արժե 120 000 ՀՀ դրամ:

Գրանցվելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ https://00wlqcpv.forms.app/maop2024-registration-form:

Ծրագրի մանրամասները՝ այստեղ՝ https://photonicsai.com/contacts-of-maop2024/:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000
info@ysu.am